Ի ԳԻՏՈՒԹԻՆ «ԱՐԱՐԱՏ»Ի ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ

Պէտք է յայտնի լինի մեր յարգելի բաժանորդներին, որ գլխաւոր կենդրոնական քաղաքներում անգամ ներկայումս թղթի մեծ պակասութիւն է զգացւում և եղած թղթերի արժէքը կրկնապատկուել և եռապատկուել է։ Մայր Աթոռի տպարանում այս տարի առաւել ևս զգալի դարձաւ թղթի կարիքը արժէքի և տպրանքների տեղափոխութիւնը մեծ դժուարութիւնների հետ կապուած լինելու պատճառով։

Այս բոլոր դժուարութիւնների վրայ աւելացաւ նաև գրաշարի պակասութիւնը, քանի որ անցած յուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսներում Մ. Աթոռի տպարանում համարեա գործերը կանգ էին առել՝ գաղթականական մեծ հոսանքի և տարածուած տարափոխիկ հիւանդութիւնների պատճառով, որովհետև գրաշարներն էլ հիւանդացել էին։

Ահա վերոյիշեալ հիմունքներով հնարաւոր չեղաւ «Արարատ»ը ամսէ ամիս կանոնաւոր կերպով հրատարակել և ստիպուած ենք միացեալ համարներով լոյս ընծայել, որ մինչև տարւոյ վերջը բոլոր համարները լոյս տեսած լինին։

Վերջին համարների ծաւալը թղթի պակասութեան պատճառով ստիպուած եղանք փոքրացնել, կրճատելով որոշ բաժինների յօդուածները։

Խմբագրութիւն «Արարատ»ի